ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ԳԵՏԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

12.07.2023թ.

«Նարվակի» ՍՊԸ գործադիր տնօրեն Ն. Հովհաննիսյանին

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Արմավիրի մարզի «Գետաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Նարվակի» ՍՊԸ-ի միջև 28» մարտի 2023թ. կնքված N ԱՄԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-2023/01-01 պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետն է ս/թ. հուլիսի 6-ը:

Սակայն պայմանագրով սահմանված ժամկետում ստանձնած պարտավորությունները չեն կատարվել ձեր կազմակերպության կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 8.11 կետը՝ Արմավիրի մարզի «Գետաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է Արմավիրի մարզի «Գետաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Նարվակի» ՍՊԸ-ի միջև 28 մարտի 2023թ. կնքված N ԱՄԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-2023/01-01 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը պատվիրատուի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի,

պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:
Այսպիսով, «Նարվակի» ՍՊԸ-ին տրվում է 10 /տասը/ օրացուցային օր՝ տուժանքներով սահմանված որակավորման՝ 345840 /երեք հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր քառասուն/ դրամ և պայմանագրի 230560 /երկու հարյուր երեսուն հազար հինգ հարյուր վաթսուն/ դրամ ապահովումների գումարները Արմավիրի մարզի «Գետաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Կենտրոնական գանձապետարանի Հ/Հ 900338000566 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն, «Նարվակի» ՍՊԸ-ին կազմակերպությանն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին, իսկ Կապալառուի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, կներկայացվեն Կապալառուի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Գ. ՄՈՒՔՈՅԱՆ